



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» փետրվարի 2020 թվականի N 4

**ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ջրաշեն համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 24-ի հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ջրաշեն համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:
2. Ջրաշեն համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի մասին:
3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
4. Հաստատել 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Ջրաշեն համայնքում Համբարձում Գեորգիանի Հովհաննիսյանի ընտանիքի կազմը:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Կարապետ Ուռուսյան	<i>[Signature]</i>		
2. Մացակ Ուռուսյան	<i>[Signature]</i>		
3. Ժորա Մկրտչյան	<i>[Signature]</i>		
4. Սպարտակ Թումասյան	<i>[Signature]</i>		
5. Բենիկ Զարգարյան	<i>[Signature]</i>		
6. Հուսիկ Թովմասյան	<i>[Signature]</i>		
7. Զավեն Տոնիկյան	<i>[Signature]</i>		



[Signature]

ՎՈՒՌՈՒՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov

ՈՐՈՇՈՒՄ

« 24 » փետրվարի 2020 թվականի թիվ 5 -Ա

**ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՕՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ջրաշեն համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի:
2. Հաստատել 2019 թվականի Ջրաշեն համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը համաձայն հավելվածի:
3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Կարապետ Ուռուսյան			
2. Մացակ Ուռուսյան			
3. Ժորա Սյրուչյան			
4. Սպարտակ Թումասյան			
5. Բենիկ Զարգարյան			
6. Հուսիկ Թովմասյան			
7. Զավեն Տոնիկյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ
 ՀԱՄԱՅՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ջրաշեն համայնքի բյուջեն փաստացի կազմել է 160221.8 իսկապ որսամ:

2019 թվականի բյուջեի եկամուտների կատարման մասին ըստ առաձին եկամտատեսակների

Եկամտային հատված				
N	Անվանումը	պլան	փաստացի	տոկոս
1	Գույքահարկ ձեռնարկությունների և կազմակերպությունների	24.7	10.4	42.1
2	Գյուղատնտեսական նշանակության հողի հարկ	4907.7	5116.6	104.3
3	Գույքահարկ փոխադրամիջոցների	5831.4	6104.4	104.7
4	Հողի վարձակալության դեմ վճարումներ	230.0	230.3	100.1
5	Տեղական տուրքեր	330.0	322.1	97.6
6	Տեղական վճարներ	180.0	128.7	71.0
7	Դոտողիա	77456.9	77456.9	100.0
8	Ընդամենը	88960.7	89368.5	100.5

Բյուջեի եկամտային մասը կատարվել է 100.5% - ով որտեղ սեփական եկամուտներ կազմել է 11093.8, փաստացի կատարվել է 11553.5 կամ 104.1%:

Համայնքի 2019 թվականի բյուջեի ծախսային մասը կազմել է 160221.8 իսկապ որսամ որից վարչական բյուջե -88960.7, ֆողային բյուջե 86282.5, փաստացի կատարվել է 85851.9 իսկապ որսամ, որից վարչական բյուջե-43303.9, ֆոնդային բյուջե 42548.0 կամ 53.6%:

Համայնքի բյուջեի ծախսերը ըստ բաժինների:

Ծախսային հատված				
N	Անվանումը	Պլան	Փաստացի	տոկոս
1	Ընդհանուր բնույթի հարային ծառայություններ	50821.6	35686.8	70.22
2	Տնտեսական հարաբերություններ	76242.5	30327.8	39.78
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն	2360.0	1784.8	75.63
4	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	13690.0	12240.0	89.4

5	Հանգիստ, մշակույթ, կրոն	400.0	60.0	15.0
6	Կրթություն	9500.0	1672.5	17.6
7	Սոցիալական պաշտպանություն	4600.0	4080.0	88.7
8	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդ	2607.7	0	0
9	Ընդհանուր ծախսեր	160221.8	85851.9	53.6

Կատարված ծախսերը ըստ բաժինների՝

1. Ընդհանուր բնույթի ընթացիկ ծախսեր օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման ապարատի պահպանման ծախսեր կազմել է 34540.5 հազար դրամ, նախատեսված 49161.6 հազար դրամի փոխարեն: Վճարվել է աշխատավարձ 29350.2 հազար դրամ նախատեսված 35981.6 հազար դրամի փոխարեն, որից պետբյուջե է փոխանցվել 7280.9 հազար դրամ եկամտային հարկ և 175.08 հազար դրամ կուտակային կեսաթոշակային ֆոնդին: Անհրաժեշտ ծառայությունների և ապրանքների ձեռք բերման նպատակով ծախսվել է 8243.7 հազար դրամ նախատեսված 18750.0 հազար դրամի փոխարեն:

2. Տնտեսական հարաբերությունների նպատակով նախատեսված 76242.5 հազար դրամից ծախսվել է 30327.8 հազար դրամ որից -29878.1 հազար դրամ ճանապարհաշինության ծախս:

3. Հանգստի, մշակույթի, կրոնի բաժնով նախատեսված 30.0 հազար դրամը ուղղվել է «բերքի տոն-2019», «Հայաստանի Հանրապետության Հիմնադրամ» և այլ միջոցառումների համար:

4. Կրթական ոլորտում նախատեսված 9500.0 հազար դրամից ծախսվել է 1672.5 հազար դրամ:

5. Սոցիալական պաշտպանվածության նպատակով ծախսվել է 4080.0 հազար դրամ նախատեսված 4600.0 հազար դրամի փոխարեն.

- 1000.0 հազար դրամ հատկացվել 19 ընտանիքներին որպես հուղարկավորման ծախս

- 680.0 հազար դրամ հատկացվել է 34 մայրերի ծննդաբերությունը խրախուսելու նպատակով

- 2400.0 հազար դրամ հատկացվել է սոցիալապես անապահով 112 ընտանիքների



[Handwritten signature]

Վ.ՈՒՌՈՒՅԱՆ

1. Շինարարություն

2019 թվականին ընթացում ամբողջությամբ տեղական բյուջեի հաշվին ավարտվել է 10-րդ փողոցի և 8-րդ փողոցի 13-րդ նրբանցքի գիշերային լուսավորման աշխատանքները:

2019 թվականին կառուցվել է 2444.6 հազար դրամ արժողությամբ Ջրաշեն համայնքի տարածքում հեղեղապատներ:

Դեռևս ընթացքում է 10-րդ փողոցի ճանապարհի հիմանորոգման աշխատանքները, որը ավարտին կհասցվի այս տարվա 1-ին կիսամյակում:

2020 թվականի համար մշակվել են ծրագրեր համայնքի փողոցները ամբողջությամբ լուսավորելու և ճանապարհները բարեկարգելու համար:

2. Գյուղատնտեսություն

2019 թվականը նախորդ տարվա համեմատ բարենպաստ չէր մաս գյուղատնտեսական աշխատանքների համար, քանի որ համայնքի ցանկատարածությունները 2 անգամ կարկտահարվել են, որից հացահատիկ - 40.36 հա, բազմամյա խոտ - 26.34 հա, կարտոֆիլ - 6.7հա, կաղամբ - 16.03 հա: Չնայած այս ամենին 2019 թվականի ընթացքում համայնքում ստացվել է 420.0 ց համախառն հացահատիկի բերք, 1 հա միջին բերքտվությունը կազմել է շուրջ 9.3ց:

Կատարվել է 130 հա աշնանացան:

Համայնքում մշակվել է 90 հա կարտոֆիլ և 80 հա կաղամբ, 22 հա այլ բանջարեղեն(սխտոր, լոբի, սեղանի ճակնդեղ, գազար և այլն), որից ստացվել է 1680.0 ց կարտոֆիլ, 22535 ց կաղամբի բերք: 1 հա միջին բերքտվությունը կազմել է կարտոֆիլը 186.7ց, կաղամբը 220.9ց:

Կուտակվել է 325 տոննա խոտ, 90 տոննա ծղոտ:

Նախորդ տարիների համեմատ աճ է նկատվում մասն անասնապահության բնագավառում: Համայնքը հարուստ չէ արոտավայրերով, սակայն 2020 թվականին համայնքում առկա է 965 գլուխ խոշոր եղջերավոր անասուն

285 գլուխ մանր եղջերավոր անասուն

528 մեղվաընտանիք

4098 թև թռչուն,

Շուրջ 471 տնտեսություն չունեն ոչ մի տեսակի գյուղատնտեսական կենդանիներ:

3. Մշակույթ և սպորտ

2019 թվականի ընթացքում, ինչպես և նախորդ տարիներին շնայած այն հանգամանքին, որ համայնքում չկա կուլտուրայի տուն, միջնակարգ դպրոցի դահլիճում և այլ վայրերում նշվել է բանակի, մայրության և գեղեցկության, հայրենական մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման տոները:

Համայնքը անմասն չի մնացել մարզում և հանրապետությունում կատարվող միջոցառումներից և իր համեստ ներդրումն է ունեցել Համահայկական Հիմնադրամի մարաթոնին և ակտիվորեն մասնակցել է ամենամյա մարզային միջոցառմանը:

4. Սոցիալական ոլորտ

Ինչպես նախորդ տարիներին այնպես էլ 2019 թվականին ուշադրության կենտրոնում են եղել համայնքի սոցիալապես անապահով խավը:

2019 թվականի ընթացքում համայնքի բյուջեից շուրջ 112 ընտանիքների ցուցաբերվել է 2400.0 հազար դրամի օգնություն:

Ծննդաբերությունը համայնքում խրախուսելու նպատակով համայնքի 34 ընտանիքների տրվել է յուրաքանչյուրին 20 000-ական դրամ միանվագ գումար:

1000.0 հազար դրամ տրամադրվել է համայնքի հարազատ կորցրած 19 ընտանիքներին հուղարկավորման ծախսերը փոքր-ինչ թեթևացնելու համար

Բարձր մակարդակի վրա է գտնվում համայնքապետարան-դպրոց հարաբերությունները և դա օրինաչափ է, քանի որ համայնքային խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է համառոտ համագործակցությունը:

2019 թվականին համայնքի բյուջեից տրամադրվել է 1350.0 հազար դրամ դրամաշնորհ դպրոցական դասագրքերի վարձավճարների համար:

Արդեն ավանդույթ է դարձել ավարտական դասարանների էքսկուրսիանների կազմակերպումը դեպի Հայաստանի տեսարժան վայրեր, դպրոցում կազմակերպված միջոցառումների և հիշատակի կամ մեծարման երեկոների ֆինանսական ծախսերը հոգում է համայնքապետարանը՝ տեղական բյուջեի հաշվին:

5. Վերջաբան

2020 թվականի ընթացքում համայնքապետարանի գործունեությունը նույնպես պետք է ուղղված լինի համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը

Համայնքի հիմնահարցը եղել է և մնում է բնակարանաշինությունը

Համայնքի շուրջ 145 ընտանիքներ դեռևս բնակվում են վագոն-տնակներում և վթարային բնակարաններում, որոնց մասնում են աղետի հետևանքով բնակտարածություն չկորցրած ընտանիքներ:

ՀԱՍՏԱՆՈՒԹՅԱՆ



Վ.ՈՒՌՈՒՄՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» փետրվարի 2020 թվականի 6 -Ա

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝

համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ջրաշեն համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.Կարապետ Ռոտուսյան	<i>[Signature]</i>		
2.Մացակ Ռոտուսյան	<i>[Signature]</i>		
3.Ժորա Սկրաշյան	<i>[Signature]</i>		
4.Սպարտակ Թովմասյան	<i>[Signature]</i>		
5.Բենիկ Ջարգարյան	<i>[Signature]</i>		
6.Հուսիկ Թովմասյան	<i>[Signature]</i>		
7. Զավեն Տոնիզյան	<i>[Signature]</i>		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԳՎԱՐ՝



[Signature]

Վ.ՈՒՌՈՒՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2020 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Վահան Ուռուսյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու փետրվարի 24 -ի թիվ 6-Ա որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

ԶՐԱՇԵՆ 2020թ.

Բովանդակություն

Ներածություն	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) -----	7
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020Թ. ԾՐԱԳԻՐԸ -----	23
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----	30
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----	32

Ներածություն

Ջրաշեն համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

ՏԱՊ – ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

ՏԱՊ-ի 1-ին բաժնում ներկայացված են համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (Աղյուսակ 1), ոլորտային նպատակները (Աղյուսակ 2):

ՏԱՊ-ի 2-րդ բաժնում բերված են համայնքի 2020 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (Աղյուսակ 3) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (Աղյուսակ 5), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (Աղյուսակ 4):

ՏԱՊ-ի 3-րդ բաժնում ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2019 թվականի ծրագիրը (Աղյուսակ 6):

ՏԱՊ-ի 4-րդ բաժնում բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (Աղյուսակ 7):

ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (Աղյուսակ 8) ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Ըստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 30-Ն որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի՝ համայնքի տեսլականն է՝ **Ջրաշեն համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող համայնք** :

Ատորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի 2020 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ֆիքսված արժեքին 2020 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կանխատեսվող ցուցանիշի ավելացումն է, հաշվի առնելով համայնքում առկա զարգացումները և միտումները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2020 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

ՏԱՊ-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ, 6 – ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	14.4	18.0
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	3545	3560

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների՝ բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից	բավարար	լավ
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	12.3	15.0
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			

<p>Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:</p>	<p>Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %</p>	<p>20</p>	<p>20</p>
	<p>Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա)</p>	<p>ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին ոչ վատ, ոչ լավ</p>
	<p>Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>միջին ոչ վատ, ոչ լավ</p>	<p>բավարար</p>
<p>Ոլորտ 5. Հողօգտագործում</p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>			
<p>Ոլորտ 6. Տրանսպորտ</p>			
<p>Բարձրացնել համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:</p>	<p>Համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին ոչ լավ, ոչ վատ</p>
	<p>Ասֆալտապատված ներհամայնքային ճանապարհների և փողոցների մակերեսը, ք.մ</p>	<p>28700 որից 3100 քմ քարից</p>	<p>37500</p>
<p>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>			
<p>Ոլորտ 8. Կրթություն</p>			

<p>Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:</p>	<p>ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը(հարցումներ ի հիման վրա)</p>	<p>բավականին լավ</p>	<p>լավ</p>
<p>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p>Ոլորտ 10. Առողջապահություն</p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն</p>			
<p>Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:</p>	<p>Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից</p>	<p>այո ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>այո միջին ոչ լավ, ոչ վատ</p>
<p>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p>Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա</p>			
<p>2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</p>			
<p>Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը շրջակա</p>	<p>Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և</p>	<p>ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին ոչ լավ, ոչ վատ</p>

միջավայրի մաքրությունը:	սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա)		
	Տեղափոխված աղբի ծավալը, տոննա	130.0	160.0
Ոլորտ 16. Ջրուսաշրջություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			
Ոլորտ 17. Տեղական հնքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			

2. Համայնքի 2020 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)
Ստորև ներկայացված են ՏԱԴ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան
ֆինանսական միջոցներով:

**Աղյուսակ 3. ՏԱԴ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական
միջոցներով**

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)
Ոլորտ 1. Ընդհանուր		
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	49230.5
2.	Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	1660.0
Ընդամենը		50890.5
Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն		
1.	Համայնքի փողոցների լուսավորում	12000.0
2.	Համայնքի մանկապարտեզի գազաֆիկացում	700.0
Ընդամենը		12700.0
Ոլորտ 3. Տրանսպորտ		
1.	Ջրաշեն համայնքի ներհամայնքային ճանապարհների կառուցում	34000.0
Ընդամենը		34000.0
Ոլորտ 4. Կրթություն		
1.	Համայնքում նախադպրոցական կրթության ծառայության մատուցում	14600.0
Ընդամենը		14600.0

Ոլորտ 5.Սոցիալական պաշտպանություն		
1.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	4600.0
	Ընդամենը	4600.0
Ոլորտ 6.Շրջակա միջավայրի պահպանություն		
1.	Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	1960.0
	Ընդամենը	1960.0
	Ընդհանուրը	118750.5

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների:

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ . Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ի գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից - ավելի շատ, քան վատ 2. Համայնքի բյուջեի մեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում՝ 16.8%			
Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում					
Ծրագրի նպատակ. Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը - ավելի շատ, քան վատ	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2020թ. հունվար - 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը:	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1 ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի	Տեղեկատվական աղբյուրներ. Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	2020թ. հունվար - 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա

<p>գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - բավականին լավ 2. Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 3%-ով 3. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում-252 օր</p>	<p>հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>			<p>են եղել</p>	
<p>Միջոցառումներ (գործողություններ) . 1. Աշխատակազմի պահպանություն 2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում 3. Համայնքի անշարժ գույքի կառավարում 4. Համայնքապետարանի և վարչական ղեկավարների նստավայրերի շենքի և գույքի ընթացիկ նորոգում</p> <p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 49230.5 հազ.դրամ 2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 13 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>					
<p>Միջանկյալ արդյունք 2. Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման անակարգակրը:</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ-3 %-ով 2. Հարկային պարտականությունները չկատարողների նկատմամբ համայնքի կողմից դատարան ներկայացված հայցադիմումների թիվը-0 3. Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում-3 %-ով 4. Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում -3 %-ով 5. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների նվազեցում- 10%-ով</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահ, երկրորդ կարգի մասնագետներ</p>	<p>2020թ. հունվար - 2020թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան արդյունքի, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>
<p>Միջոցառումներ (գործողություններ) . 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցների վերապատրաստումներ 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում 3. Ապառքներ ունեցող հարկատուների հետ բացատրական աշխատանքների իրականացում.</p> <p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ՝ 2 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ՝ առկա է 3. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ՝ 19409.6 հազ.դրամ</p>					

<p>պարտականությունները չկատարողների նկատմամբ դատարան կամ ԴԱՀԿ հայցադիմումների ներկայացում</p> <p>Միջանկյալ արդյունք 3. Բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <p>1. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - ավելի շատ ավազան քան վատ</p> <p>4. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացված դիմում-բողոքների թվի նվազում - 3 %-ով</p> <p>5. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը - շաբաթը 1 անգամ</p> <p>6. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը - 2 օր</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳԿիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար, ՀՈԱԿ-ի տնօրեններ,</p>	<p>2020թ. հունվար - 2020թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան թակառուցվածքների և մասնագետների առկայությունը</p>
--	---	---	--	--	---

Միջոցառումներ (գործողություններ) .

1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում
2. Համայնքի ֆինանսական թափանցիկ և արդյունավետ կառավարում
3. Համայնքի գույքի կառավարման բարելավում
4. Աշխատակազմում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի գործունակ աշխատանքային վիճակի պահպանում և շահագործում
5. Համացանցային կայքում առկա տեղեկատվության պարբերական թարմացում

Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).

1. Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ - 9
2. Տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր - առկա է
3. Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ - 2
4. Աշխատակազմում տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -
5. Համայնքի պաշտոնական համացանցային կայք - առկա է

<p>Ծրագիր 2. Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում</p>				
<p>Ծրագրի նպատակ. Հզորացնել համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունները</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմի կառավարման համակարգերը բարելավվել են, աճել են աշխատակիցների գիտելիքները և հմտությունները, 15 %-ով</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2020թ. հունվար - 2020թ. դեկտեմբեր</p> <p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>

<p>Միջանկյալ արդյունք 1. Աշխատակազմի աշխատակարգերը և առկա կառավարման (վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլն) համակարգերը բարելավվել են</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմի բարելավված աշխատակարգեր և կառավարման համակարգեր – առկա է 2. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում բողոքների թվի նվազում - 5 %-ով 3. Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը - 2 4. Աշխատակազմում կիրառվող տեղեկատվական համակարգերի թիվը - 1 5. Աշխատակազմում օգտագործվող համակարգիչների թիվը - 3 6. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատակիցների կարծիքը բարելավված կառավարման համակարգերի վերաբերյալ – շատ լավ 7. Տարվա ընթացքում բարելավված աշխատակարգերի թիվը - 3 8. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի 	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՏՀԶԿԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>2020թ. հունվար 2020թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան թակառուցվածքների, ֆինանսական ռեսուրսների և մասնագետների առկայությունը</p>
<p>Միջոցառումներ (գործողություններ) .</p> <ol style="list-style-type: none"> 1. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում 2. Համայնքային քաղաքականությունների, ծրագրերի մշակում և կառավարում 3. Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերից խմբագրում 4. Աշխատակազմի աշխատակիցներին անհրաժեշտ համապատասխան տեխնիկական և ծրագրային միջոցներ ով ապահովում 		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր 880.0 հազ. դրամ 2. Աշխատակազմի վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլ համակարգեր – առկա է 3. Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն – առկա է <p>Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>			
<p>Միջանկյալ արդյունք 2. Աշխատակազմի աշխատակիցների տեխնիկական և մասնագիտական կարողությունները բարձրացել են</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմում ՀԿՏՀ-ի առկայությունը – առկա է 2. ՀԿՏՀ-ում օգտագործվող ծրագրերի թիվը - 2 3. Աշխատակազմում կիրառվող հեռահաղորդակցության համակարգերի թիվը - 1 	<p>Տեղեկատվական աղբյուրներ Աշխատակազմ, ՏՀԶԿԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>2020թ. հունվար 2020թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան թակառուցվածքների, ֆինանսական ռեսուրսների և մասնագետների առկայությունը</p>
<p>Միջոցառումներ (գործողություններ) .</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմի աշխատատեղերի վերազինում 		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմի 			

ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով
2. Աշխատակազմի գույքի նորացում
աշխատակիցներ - 2

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն
Ոլորտային նպատակ.
Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:
Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.
1. Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ - 15 %
2. Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) - ավելի շատ վատ, քան լավ

Ծրագիր 1. Համայնքի փողոցների լուսավորում					
Ծրագրի նպատակ. Բարձրացնել Ջրաշեն գյուղի փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը, փողոցները դարձնել լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, հյուրերի և տրանսպորտային միջոցների համար:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Ջրաշեն գյուղի փողոցները դարձնել լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, հյուրերի և տրանսպորտային միջոցների համար - 40%-ով 2. Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ - 15%	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի տեղակալ, Իրականացումը՝ ՀՈԱԿ-ի միջոցով	2020թ. հունիս - 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Ջրաշեն գյուղի փողոցները դարձել են լուսավոր, գեղեցիկ և բարեկարգ	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Փողոցներում տեղադրված լուսատուների և հենասյուների քանակը -105 2. Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից - ավելի շատ լավ, քան վատ 3. Ծրագրի իրականացման ժամկետը - 6 ամիս	Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, Ջրաշեն գյուղի բնակիչներ	Համայնքի ղեկավարի տեղակալ,	2020թ. հունիս - 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկա են եղել
Միջոցառումներ (գործողություններ) 1. Ջրաշեն համայնքի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնման, հենասյուների և ներկման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում 2. Փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնման, հենասյուների ներկման աշխատանքների իրականացում և վերահսկում 3. Աշխատանքների կատարման ավարտական ակտերի կազմում, քննարկում և հաստատում	Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 12000.0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 3. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ				

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն
Ոլորտային նպատակ.
Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:
Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.
1. Բարելավվել են Ջրաշենի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի նախադարձական կրթության ծառայությունների մատուցման պայմանները

Ծրագիր 2. Ջրաշեն համայնքի մանկապարտեզի գազաֆիկացում

<p>Ծրագրի նպատակ. Ձեռք բերել Ջրաշենի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի համապատասխան գույք և բարելավել ծառայությունների մատուցման պայմանները</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել է Ջրաշեն գյուղի բնակչությանը նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցման որակը - լավ</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար.</p>	<p>2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարությո ւ</p>
